

fintech companies to enter the banking sector. Fintech companies offer services that open up broader opportunities for their customers. The innovative example of this is the technologically open banking system. Studying the experience of numerous countries who switched to an open banking system with its risks and benefits, we have concluded that it will boost competition in the financial market. Moreover, it will facilitate the management of credit cards, deposits, loans, payments from various banks and will contribute to the reformation of relations between the bank and the client.

ՀԱՅՐԱՊԵՏ ԳՈՐՅԱՆ

Մարքեթինգային հաղորդակցություններ,
մագիստրատուրա, 2-րդ կուրս

ՎՃԱՐԱՅԻՆ ՔԱՐՏԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Հիմնաբառեր. վճարային քարտ, անկանխիկ, վճարում,
բանկ, գործարք

Սույն հոդվածում ուսումնասիրվել ու վերլուծվել են անկանխիկ վճարումները, մասնավորապես՝ վճարային քարտերով կատարվող գործառնությունները, վերջիններիս կառուցվածքային, քանակական և ծավալային ցուցանիշները, անդրադարձ է կատարվել նախահամաձարակային և հետհամաձարակային ժամանակահատվածին՝ նպատակ ունենալով ցույց տալու համաձարակի ազդեցությունը ՀՀ-ում կատարվող անկանխիկ գործառնությունների առկա միտումների վրա: Մշակվել է նաև մի քանի առաջարկություն՝ միավաճ անկանխիկ գործառնությունների խթանմանը:

Ներածություն: Բանկային ծառայությունների ամենապահանջված և ամենադինամիկ զարգացող տեսակներից մեկը վճարային քարտերի թողարկումն ու սպասարկումն է: Վճարային պլաստիկ քարտը անկանխիկ վճարամիջոց է և հաճախորդներին ընձեռում է ֆինանսական սպասարկման նոր ու ճկուն հնարավորություններ. նվազեցնում է կանխիկով կատարվող գործառնությունների ծախսերը, իջեցնում կանխիկի պահպանման և տեղափոխման ծախսերը, վերացնում կանխիկ փողի կորստի ռիսկը, գողությունների ավանդական ճկերը, արտոնյալ պայմաններ ստեղծում գործարար շուկայի մասնակիցների համար, ինչպես նաև զգալիորեն արագացնում ու հեշտացնում է անկանխիկ վճարումները և այլն: Վճարային քարտը, իրավամբ, հաճախորդի՝ բանկ մուտք գործելու առաջին կարևորագույն «այցեքարտերից» մեկն է, որը սկիզբ է դնում բանկ-հաճախորդ փոխհարաբերություններին:

Գրականության ակնարկ: Համաձայն ոլորտը կարգավորող օրենքի՝ «վճարային քարտը դեբետային, վարկային, էլեկտրոնային քսակի կամ միջազգային պրակտիկայում ընդունված այլ տեսակի քարտի ձևով վճարային գործիք է, որն օգտագործվում է կանխիկ դրամ ստանալու կամ անկանխիկ եղանակով վճարումներ կատարելու, ինչպես նաև վճարային քարտ թողարկողի սահմանած այլ գործառնություններ կատարելու համար»¹: Այսինքն, այն գործիք է, որով կարելի է ստանալ դրամական միջոցներ, բանկի բաժանմունքներից և բանկումատներից կանխիկացնել գումար, առանց կանխիկի կատարել վճարումներ առևտրի ու սպասարկման կետերում, իրականացնել առցանց

¹ Տե՛ս «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք, ՀՀՊՏ 2004.12.28/72(371), հոդ.1471:

առևտուր և բանկոմատների կամ այլ հարթակների միջոցով կատարել կոմունալ ու այլ տեսակի պարտադիր վճարումներ, պարբերաբար հետևել ֆինանսական վարքագծին, շահավետ պայմաններով օգտվել նաև այլ ֆինանսական ծառայություններից:

Վճարային քարտերը կարելի է դասակարգել մի քանի չափանիշներով¹: Ըստ քարտապանների՝ լինում են ֆիզիկական անձանց և իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին տրվող *վճարային քարտեր*, իսկ ըստ վճարման տեսակի կամ սխեմայի՝ *դեբետային քարտեր* (նախատեսված քարտապանի կողմից իր հաշվի վրա առկա դրամական միջոցներով գործարքներ կատարելու համար՝ առանց բանկ այցելելու կառավարելով և օգտագործելով բանկային հաշվին առկա սեփական միջոցները), *վարկային կամ կրեդիտային քարտեր* (նախատեսված քարտապանի հաշվին ֆինանսական կազմակերպության կամ բանկի կողմից վարկի ձևով տրամադրված գումարով քարտապանի կողմից գործառնություններ իրականացնելու համար՝ վարկային պայմանագրի պայմանների համաձայն) և *հաշվարկային քարտեր* (միավորում է վերոնշյալ երկու քարտերի հատկանիշները. օրինակ՝ դեբետային քարտով կարելի է նաև ստանալ վարկային գիծ): Պետք է նկատի ունենալ այն հանգամանքը, որ ՀՀ-ում հաճախ խառն են օգտագործվում վերոնշյալ քարտերի անվանումները. կրեդիտային քարտը հաճախ ասոցացվում է հաշվարկային քարտի հետ, իսկ վճարային քարտն առավել հաճախ հայտնի է որպես «պլաստիկ քարտ»²:

Քարտերի և վճարամիջոցների օգտագործման միջազգային միտումների ուսումնասիրությունը փաստում է, որ ամբողջ աշխարհում կանխիկ վճարումներն անկանխիկ վճարումներին իրենց տեղը զգալիորեն զիջել են շատ ավելի վաղ՝ մինչ COVID-19-ի ի հայտ գալը: Վճարման և քարտերի օգտագործման հետ կապված միտումներն ընթանում են 2 ուղղությամբ. վճարային տեխնոլոգիաների էվոլյուցիոն զարգացում, որը ներառում է ակնթարթային վճարումներ, հաշիվների վճարում, թվային դրամապանակներ և այլն, ու վճարումների հեղափոխական առաջարկներ, օրինակ՝ «Գնի՛ր հիմա, վճարի՛ր հետո» առաջարկը, կրիպտոարժույթները, թվային արժույթները և այլն: Ըստ PwC ընկերության կանխատեսումների՝ 2020-2025 թթ. անկանխիկ վճարումների թիվն աշխարհում կավելանա ավելի քան 80%-ով՝ հասնելով 1,9 տրիլիոնի, իսկ 2030 թ.՝ ևս 61%-ով՝ կազմելով 3 տրիլիոն գործարք³:

Քարտերի օգտագործման հետ կապված կարևոր միտումներից է բանկեր սակավ այցելությունների և վիրտուալ քարտերով վճարումների աճը: Սրան հատկապես դրդեցին համավարակի ժամանակաշրջանի սահմանափակումները: Դեռևս համավարակից առաջ խրախուսվում էր հեռավար բանկինգից օգտվելը, կային վճարումների բազում այլընտրանքներ, դրանցից օգտվելու տեմպերը զարգանում էին բնականոն հունով՝ առանց լուրջ վայրիվերումների: Այժմ, երբ հաճախորդներն ստիպված օգտվում են նման ծառայություններից, բացահայտում դրանց առավելությունները, արդեն դժվար է հետ վարժվելը: Թեև արդեն մի քանի տարի է, որ վիրտուալ քարտերը գործում են, սակայն նույնիսկ ԱՄՆ-ում դրանք սկսեցին լայնորեն ընդլայնվել 2020 թվականից սկսած, երբ շատերը նախընտրեցին անհպում վճարումները: Որոնողական

¹ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=94161>

² <https://abcfinance.am/credit-card.html>

³ <https://www.pwc.com/gx/en/financial-services/fs-2025/pwc-future-of-payments.pdf>

համակարգերում «անհայում վճարումներ» որոնումը վերջին 5 տարվա ընթացքում աճել է 80%-ով¹: Ըստ Mastercard-ի անցկացրած հետազոտության՝ գլոբալ հարցվողների 79%-ն անհայում վճարումներ կիրառում էր դեռևս 2020 թվականից²: Այժմ յուրաքանչյուրը զբոսնում է՝ գրպանում ունենալով թվային բանկինգի հավելված և թվային դրամապանակ³: Բացի դրանից, վիրտուալ քարտ ունենալու դեպքում կարելի է օգտվել նաև NFC տեխնոլոգիայից (Near-Field Communication՝ մերձդաշտային հաղորդակցություն), որը 2 էլեկտրոնային սարքերի միջև 4 սմ և ավելի մոտ հեռավորության վրա կապի և հաղորդակցման տեխնոլոգիա է⁴: Անհայում վճարումներ կատարվում են նաև ոչ քարտերի միջոցով: Դրա վառ օրինակը Amazon կորպորացիան է, որը վճարումներ է իրականացնում ծայնային հաղորդագրության միջոցով: Տարածված են նաև վճարումները կրովի (wearable) աքսեսուարների միջոցով, ինչպիսին են Apple Watch-ը կամ Purewrist ընկերության կաուչուկե թևնոցը⁵: Լայն թափ են ստանում նաև QR կոդով վճարումները, երբ հաճախորդները սքանավորում են վճարման ենթակա գումարին համապատասխան կոդը, որից հետո անհրաժեշտ է միայն 1 հայումով վճարել⁶: Ֆինանսական էկոհամակարգի միտումներից է BNPL մեթոդը (Buy now pay later՝ Գնի՛ր հիմա, վճարի՛ր հետո), որը հավակնում է լուրջ հարված հասցնել քարտերին, քանի որ այս դեպքում վճարման համար նույնիսկ քարտ պետք չէ: Այս փաստը հաստատվում է հարցմամբ, ըստ որի՝ այդ մեթոդն օգտագործողների 62%-ը նշում է՝ այն ապագայում կփոխարինի քարտերին⁷: Այս մեթոդը վարկավորման, քարտերի և վճարումներ կատարելու ավանդական ձևերի հետաքրքիր խառնուրդ է: Հաջորդ նորարարությունը կապվում է կենսաաչափական (մատնահետք, դիմային կամ ծայնային ճանաչում և այլն) վճարումների հետ, որոնց դիմամիկ զարգացումը դեռ շարունակվում է՝ վճարումները դարձնելով ավելի անվտանգ, արագ և հեշտ⁸: Բացի արտաքին փոփոխություններից, տեղի են ունենում նաև կառուցվածքային փոփոխություններ, որոնք կապված են տեխնոլոգիաների զարգացման և անվտանգության պահանջների խստացման հետ: Ֆինանսական ծառայություններ մատուցող 10 հարցված ընկերություններից 8-ը նախատեսում է մինչև 2025 թ. այդպիսի ենթակառուցվածքի ստեղծումն ու շահագործումը հանձնել աուքսորսինգին⁹: Համավարակի հետնապատկերին էլեկտրոնային առևտրի կտրուկ աճը հանգեցրել է նաև զեղծարարության աճի: Կիբեռանվտանգությունը և հաճախորդների տվյալների գաղտնիությունը բանկերի հիմնական մտահոգությունն են: Հարցումները հաստատում են մտահոգությունն այդ ռիսկերի վերաբերյալ. հարցվածների գրեթե կեսը դա համարում է հիմնական խնդիր՝ առաջիկա 5 տարվա համար: Բանկերը ու կարգավորիչ մարմինները առաջիկայում զեղծարարության դեմ պայքարում ավելի սերտ կհամագործակցեն¹⁰:

¹ <https://explodingtopics.com/topic/contactless-payment>

² <https://www.mastercard.com/news/press/press-releases/2020/april/mastercard-study-shows-consumers-globally-make-the-move-to-contactless-payments-for-everyday-purchases-seeking-touch-free-payment-experiences/>

³ <https://www.creditcard.com.au/the-future-of-credit-cards-payment-trends-2021/>

⁴ <https://www.techradar.com/news/what-is-nfc>

⁵ <https://explodingtopics.com/blog/credit-card-industry-trends>

⁶ <https://www.creditcard.com.au/the-future-of-credit-cards-payment-trends-2021/>

⁷ <https://www.fool.com/the-ascent/research/buy-now-pay-later-statistics/>

⁸ <https://www.creditcard.com.au/the-future-of-credit-cards-payment-trends-2021/>

⁹ <https://www.pwc.com/gx/en/financial-services/fs-2025/pwc-future-of-payments.pdf>


¹⁰ <https://www.pwc.com/gx/en/financial-services/fs-2025/pwc-future-of-payments.pdf>

Կան նաև «դիմակավորված» քարտեր, որոնք պաշտպանում են հաճախորդների անձնական տվյալները՝ ֆինանսական գործարքների կատարման ժամանակ դրանք չկիսելով երրորդ կողմի հետ¹:

Մեթոդաբանություն: Վճարային քարտերին վերաբերող տվյալները վերցված են ՀՀ կենտրոնական բանկի (ԿԲ), Հայաստանի բանկերի միության (ՀԲՄ) և ՀՀ վիճակագրական կոմիտեի (ՎԿ) առկա բաց հրապարակային նյութերից, իսկ հետազոտությունն իրականացվել է վերլուծության, համադրման, խմբավորման, համեմատման, ընդհանրացման մեթոդների համակողմանի կիրառմամբ:

Հետազոտության արդյունքներ և քննարկում: Համավարակն ազդել է վճարումներ, գնումներ և նման այլ գործարքներ կատարելու՝ մարդկանց վարքագծի վրա: Կարևոր է նկատել, որ համավարակը հանգեցրեց ոչ թե փոփոխությունների, այլ պարզապես արագացրեց նախորդ տարիների տեմպերը: Այսինքն, անկանխիկ գործարքների աճի համեմատաբար կայուն տեմպն ավելի արագացրեց՝ ստիպելով մի քանի տարում գրանցվելիք աճի տեմպը խտացնել մեկ տարվա մեջ: Համաձայն ՀԲՄ վերլուծության՝ այս միտումից անմասն չի մնացել նաև ՀՀ-ն: Առկա տվյալները փաստում են, որ 2020 թ. ոչ միայն պահպանվել է անկանխիկ գործարքների աճի տեմպը, այլև ՀՀ բանկային ողջ պատմության մեջ առաջին անգամ անկանխիկ գործարքների քանակը գերազանցել է կանխիկով գործարքներին (գծապատկեր 1): 2019 թ. նույն ժամանակահատվածի համեմատ, երբ անկանխիկ և կանխիկ գործարքների քանակը գրեթե հավասար է եղել, անկանխիկ գործարքների քանակն աճել է 68.8%-ով: 2021 թ. I եռամսյակի դրությամբ էլ ՀՀ-ում կատարվել է 17 995 639 անկանխիկ և 10 444 587 կանխիկ գործարք, այսինքն՝ կարող ենք փաստել, որ աճի նման տեմպը առաջիկայում ևս կպահպանվի²:

Ինչպես երևում է քարտերի և վճարամիջոցների օգտագործման միջազգային միտումների ուսումնասիրությունից, երբ ամբողջ աշխարհում արդեն լայնորեն օգտագործվում են քարտերի այլընտրանքային միջոցները, ՀՀ-ում մինչ դրան հասնելը պետք է նախ ունենալ քարտեր, կիրառել դրանք, հետո նոր անցում կատարել կամ զուգակցել այն ֆինանսական տեխնոլոգիաների հետ: Այսինքն, ՀՀ-ում կայուն տեմպերով սկսում է զարգանալ քարտային վճարումների մշակույթը, թեև որոշ բանկեր իրենց հաճախորդներին առաջարկում են նման նորարարական ֆինանսական տեխնոլոգիաներ, որոնցից օգտվողների թիվը դեռևս զգալի չէ:




Գծապատկեր 1. Կանխիկ և անկանխիկ գործարքների քանակը ՀՀ-ում (%)

¹ <https://www.bankrate.com/finance/credit-cards/credit-card-industry-trends/>

² https://uba.am/upload/research/2021/Plastic_Cards__Transfers-31.03.2021.pdf

Ինչ վերաբերում է բանկային հաճախորդների թվին, ապա 2021 թ. հուլիսի դրությամբ այդ թիվը, 2020-ի համեմատ, արդեն իսկ աճել է շուրջ 3%-ով՝ կազմելով 3 346 464, որն էլ, նախահամալարակային ժամանակահատվածի համեմատ (2019 թ.), աճել է 10%-ով: Իսկ այդ նույն հաճախորդների բանկային հաշիվների թիվը, որում գերակշռում են ֆիզիկական անձանց հաշիվները, 2021 թ. III եռամսյակի դրությամբ, 2020 թ. համեմատ, աճել է շուրջ 4,3%-ով՝ կազմելով 6 536 431, որն էլ 2019 թ. համեմատ աճել է ևս 10%-ով: Կարող ենք փաստել, որ բանկային հաճախորդների և նրանց հաշիվների աճի տեմպերի առումով էական փոփոխություններ տեղի չեն ունեցել, փոխվել են նրանց կողմից վճարումներ կատարելու ձևերն ու միջոցները¹:

Այժմ անդրադառնանք վճարային քարտերի (այսուհետ՝ քարտ) մասին համառոտ վիճակագրությանը: ՀՀ-ում գործող բանկերից միայն Մելլաթ բանկը չի թողարկում և չի սպասարկում քարտեր²: 2021 թ. III եռամսյակի դրությամբ քարտերի թիվը կազմել է 2 621 025, որոնցով կատարվել է 18 154 229 գործարք, որը 2019 թ. նույն ժամանակահատվածի համեմատ ավելացել է 33.8%-ով, իսկ 2020 թ. համեմատ՝ 4.5%-ով: Բայց այստեղ ամենափոքր թիվը միջազգային այլ քարտերինն է (գծապատկեր 2)³:



Գծապատկեր 2. ՀՀ բանկերի կողմից թողարկված՝ շրջանառության մեջ գտնվող վճարային քարտերը 2021 թ. III եռամսյակի դրությամբ

2020 թ. համեմատ ՄԵԼԼԱՐԻՍ քարտերի թիվն ավելացել է 0,5%-ով (2019 թ. համեմատ՝ 1,7%-ով), VISA քարտերինը՝ 7,8%-ով (2019 թ. համեմատ՝ 14%-ով), Master Card քարտերինը՝ 5,8%-ով (2019 թ. համեմատ՝ 13,5%-ով): Ուշագրավ է, որ միջազգային այլ քարտերի քանակը, որում ներառված են Diners Club (ներկայացուցիչ՝ Արարատբանկ⁴), American Express⁵ և JBC⁶ (ներկայացուցիչ՝ Ակբա բանկ) քարտերը, 2020 թ. դրությամբ աճել է 3,8%-ով, թեպետ, 2019 թ. Համեմատ նվազել է 3,3%-ով: Դա կարող էր կապված լինել համավարակից թխող ճամփորդական սահմանափակումների հետ, երբ արդեն չկային քարտերն արտասահմանում կիրառելու լայն հնարավորություններ, և քարտատերերը նախընտրում էին չվերաթողարկել դրանք, քանի որ այլևս ընդգծված արտոնություններ չկային երկրի ներսում կիրառվող քարտերի համեմատ այլ հավասար պայմաններում: Իսկ հետագայում՝ սահմանափակումների մեղմացմանը զուգընթաց, դրանք դանդաղորեն աճել են:

¹ https://uba.am/upload/research/2021/banking_system_30.09.21.pdf

² <https://www.mellatbank.am/am/services/shetab>


³ <https://www.cba.am/am/SitePages/psstatisticaldatareports.aspx>

⁴ <https://www.araratbank.am/diners/about-us.html>

⁵ <https://www.americanexpress.com/hy-am/network/credit-cards/acba/>

⁶ <https://www.global.jcb/en/consumers/about-atm/spot/index.html>


Աճ է գրանցվել նաև քարտերով գործարքների ծավալների մասով. 2020 թ. կազմել է 2 751 076 մլն ՀՀ դրամ, որը նախորդ տարվա համեմատ ավելացել է 16.3%-ով, իսկ 2021 թ. I եռամսյակում տեմպը կարծես պահպանվում է (գծապատկեր 3): Այսինքն, կարող ենք արձանագրել, որ համավարակն էականորեն չի ավելացրել քարտերով կատարվող գործարքների ծավալը, ինչը, սակայն, չենք կարող ասել քարտերով կատարվող գործարքների քանակի մասով. 2020 թ. կատարվել է 89 295 088 գործարք, որը 2019 թ. համեմատ ավելի է 36.9%-ով (գծապատկեր 4):



Գծապատկեր 3. Քարտերով կատարված գործարքների ծավալը ՀՀ-ում (մլն ՀՀ դրամ)

Կարևոր է նաև անդրադառնալ ՀՀ բանկերի կողմից թողարկված քարտերով կատարված գործարքների քանակին ու ծավալին (գծապատկեր 5). 2021 թ. III եռամսյակի դրությամբ ՀՀ տարածքում կատարվել է 30 053 613 գործարք (2020 թ. համեմատ աճել է 38%-ով)¹ 197866 մլն ՀՀ դրամ ծավալով (2020 թ. համեմատ աճել է 20%-ով):

Մասնավորապես, ՀՀ տարածքում գործարքների կեսից ավելին բաժին է ընկնում Visa քարտերին¹:




Գծապատկեր 4. Քարտերով կատարված գործարքների քանակը ՀՀ-ում

ՀՀ-ում դեռևս 2020 թ. գրանցված աճի ցուցանիշները փաստում են, որ մարդիկ գիտակցել են անկանխիկ գործարքների մի շարք առավելություններ:

Պակաս կարևոր չէ նաև վերլուծել ՀՀ-ում միջինում քարտերով կատարվող 1 գործարքի ծավալը, ինչն արտացոլված է գծապատկեր 6-ում: Ինչպես երևում է գծապատկերից, մինչ համաճարակային իրավիճակը՝ 2019 թ., միջինում քարտերով կատարվող 1 կանխիկ գործարքի ծավալն ավելացել է 6,2%-ով,


¹ <https://www.cba.am/am/SitePages/psstatisticaldataareports.aspx>

բայց, միևնույն ժամանակ, միջինում քարտերով կատարվող 1 անկանխիկ գործարքի ծավալը նվազել է 11,5%-ով¹:




Գծապատկեր 5. ՀՀ բանկերի թողարկած քարտերով գործարքների քանակն ու ծավալը ՀՀ տարածքում, 2021 թ. III եռամսյակի դրությամբ

Դիտարկելով քարտերով գործարքներն ըստ սպասարկման միջոցների՝ կտեսնենք, որ այնտեղ թե՛ ծավալի և թե՛ քանակի առումով գերիշխում է բանկոմատների բաժինը (ATM): Դա նշանակում է, որ հաճախորդներն առավելապես հակված են դրամական միջոցներն օգտագործել կանխիկ եղանակով, քան օգտվել այլ եղանակներից (գծապատկեր 7): Բայց այստեղ արտացոլված են նաև աշխատավարձ կանխիկացնելու դեպքերը, որոնք թեկուզ նվազագույն գումար կանխիկացնելիս համակարգի կողմից կարտացույցվեն որպես բանկոմատով կատարվող գործարք: Բոլոր դեպքերում էլ բանկոմատով կատարվող գործարքները մեծ մասնաբաժին են կազմում: Իսկ եթե այս նույն ցուցանիշների աճը դիտարկենք նախորդ տարվա դրությամբ, ապա կտեսնենք, որ ծավալի առումով ամենամեծ աճը՝ 43,1%, և քանակի առումով ամենամեծ աճը՝ 83,3%, եղել է POS-տերմինալների դեպքում²:



Գծապատկեր 6. ՀՀ-ում միջինում քարտերով կատարվող 1 գործարքի ծավալը (ՀՀ դրամ)




Գծապատկեր 7. Քարտերով գործարքները՝ ըստ սպասարկման միջոցների (2021 թ. III եռ. դրությամբ)

¹ https://uba.am/upload/research/2021/Plastic_Cards__Transfers-31.03.2021.pdf

² <https://www.cba.am/am/SitePages/psstatisticaldataareports.aspx>

Կարևոր է նաև այն, որ բանկոմատների թիվը 2021 թ. I եռամսյակի դրությամբ, 2020 թ. համեմատ, մնացել է գրեթե անփոփոխ, իսկ POS-տերմինալների թիվը, 2019 թ. համեմատ, ավելացել է 24.5%-ով, նախորդ տարվա համեմատ՝ 7%-ով¹: Իսկ եթե դիտարկենք բանկոմատներով ու POS-տերմինալներով կատարված 1 գործարքի միջին ծավալը (գծապատկեր 8), ապա կտեսնենք, որ բանկոմատներով կատարվող 1 գործարքի միջին ծավալը շարունակում է աճել ըստ տարիների, իսկ POS-տերմինալների դեպքում տարիներ ի վեր նկատվող անկումը սկսում է դանդաղել²:



Գծապատկեր 8. Մեկ գործարքի միջին ծավալը բանկոմատներով և POS-տերմինալներով, ՀՀ դրամ

Եզրակացություն: Անխոս, կարող ենք փաստել, որ անկանխիկ ու քարտերով իրականացվող գործառնություններն իրենց բոլոր ցուցանիշներով անխտիր աճել են: Այս աճի գլխավոր գործոններից մեկը համավարակն է. այն պարզապես եկավ արագացնելու մինչ այդ արձանագրվող աճի տեմպը: Բայց, միևնույն ժամանակ, ՀՀ-ում դեռևս կիրառվում են կանխիկով գործառնություններ, որն ակնհայտ դարձավ, երբ անդրադարձ կատարվեց ըստ սպասարկման միջոցների քարտերով կատարվող գործառնություններին: ՀՀ-ում դեռևս լայնորեն չեն կիրառվում նորագույն ֆինանսական տեխնոլոգիաների ու բանկային հավելվածների միջոցով կատարվող գործառնություններ. ինչպես ցանկացած նորարարության դեպքում, մարդիկ կասկածանքով և անվստահությամբ են վերաբերվում: Այսինքն, ՀՀ-ում բանկային քարտերի հետ կապված հիմնական միտումները դեռևս անկանխիկ քարտային գործարքներն են. Ֆինանսական նորագույն տեխնոլոգիաների կիրառումը ՀՀ-ում սաղմնային վիճակում է՝ առաջիկայում ընդլայնման շատ մեծ ներուժով: Ուստի առաջարկվում են հետևյալ միջոցառումները.

1. ՀՀ բանկերը պետք է շարունակ խթանեն նորագույն վճարային միջոցների ներդրումն ու օգտագործումը,
2. ՀՀ բանկերի կողմից պետք է ձևավորվի անկանխիկ վճարումների ու նորագույն տեխնոլոգիաների հետ կապված պարբերական քննարկումների մշակույթ,
3. պետական մակարդակով պետք է կազմակերպվեն առցանց ու քարտերով իրականացվող գործարքներին ու կիբեռանվտանգությանն առնչվող հարցերի հրապարակային կամ պանելային քննարկումներ:

Զնայած առկա խնդիրներին՝ մի բանում կարող ենք վստահ լինել. անկանխիկ գործառնությունները մոտ ապագայում լինելու են վճարումների կատարման առավել հուսալի, հեշտ ու մինչև անգամ անփոխարինելի գործիք:

¹ https://uba.am/upload/research/2021/Plastic_Cards__Transfers-31.03.2021.pdf

² Նույն տեղում:

Օգտագործված գրականության ցանկ

1. ՀՀ օրենքը «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին»:
2. <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=94161>
3. <https://abcfinance.am/credit-card.html>
4. <https://explodingtopics.com/blog/credit-card-industry-trends>
5. <https://explodingtopics.com/topic/contactless-payment>
6. https://uba.am/upload/research/2021/banking_system_30.09.21.pdf
7. https://uba.am/upload/research/2021/Plastic_Cards_Transfers-31.03.2021.pdf
8. <https://www.americanexpress.com/hy-am/network/credit-cards/acba/>
9. <https://www.araratbank.am/diners/about-us.html>
10. <https://www.bankrate.com/finance/credit-cards/credit-card-industry-trends/>
11. <https://www.cba.am/am/SitePages/psstatisticaldataareports.aspx>
12. <https://www.creditcard.com.au/the-future-of-credit-cards-payment-trends-2021/>
13. <https://www.fool.com/the-ascent/research/buy-now-pay-later-statistics/>
14. <https://www.global.jcb/en/consumers/about-atm/spot/index.html>
15. <https://www.mastercard.com/news/press/press-releases/2020/april/mastercard-study-shows-consumers-globally-make-the-move-to-contactless-payments-for-everyday-purchases-seeking-touch-free-payment-experiences/>
16. <https://www.mellatbank.am/am/services/shetab>
17. <https://www.pwc.com/gx/en/financial-services/fs-2025/pwc-future-of-payments.pdf>
18. <https://www.techradar.com/news/what-is-nfc>

ԱՅՐԱՊԵՏ ԳՐՅԱՆ

*Մարկետինգային կոմունիկացիան,
 մագիստրատուրա, 2-օր կուրս*

ТЕНДЕНЦИИ ИСПОЛЬЗОВАНИЯ ПЛАТЕЖНЫХ КАРТ В РА

Ключевые слова: *платежная карта, безналичный, плата, банк, операция*

В этой статье были рассмотрены и проанализированы безналичные платежи, в частности операции с банковскими картами, их структурные, количественные и объёмные показатели. В работе упоминается промежуток времени до и после пандемии с целью показать её влияние на текущие тенденции безналичных операций в РА. Разработаны также несколько предложений, нацеленных на стимулирование безналичных операций.

HAYRAPET GORYAN

*Marketing Communications,
 Master's Degree, 2nd Year*

THE TENDENCIES OF USING BANK CARDS IN THE RA

Keywords: *payment card, non-cash, payment, bank, transaction*

This paper deals with examination and analysis of non-cash payments, particularly transactions with bank cards, their structural, quantitative and volumetric indicators. The paper mentions the time interval before and after the pandemic in order to show its impact on the current tendencies of non-cash transactions carried out in the RA. Several proposals have been developed with an aim to stimulate non-cash transactions.